Իրենց բանակների զինվորներին ավելի լավ մշակելու հնարավորութեան ունենալու համար, բուրժուազիան ձգտում է քույր լուսաւ, վոր ակտիվ մասնակցութեան ունենան քաղաքական կյանքին: Բոլոր կապիտալիստական բանակներում զինվորներին քաղաքական իրավունքները սահմանափակված են: Նրանք իրավունք չունեն կոմունիստական կուսակցութեան անդամ լինել, մասնակցել քաղաքական ցույցերին, պետութեան քաղաքական կյանքին: Միջանի պետութեաններում զինվորները իրավունք չունեն որեւէ գրական հիմնարկութեաններին, պարլամենտի ընտրութեաններին մասնակցել: Մյուս պետութեաններում իրավունք ունեն ընտրելու, բայց իրավունք չունեն ընտրվելու:

Սպաների և շարքային զինվորների միջև գոյութեան ունի դասակարգային պարտաւորում: Կապիտալիստական բանակներում կարգապահութեանը դասակարգային է, խիստ: Միջանի բանակներում, ինչպես որինակ Ռուսիայում, միջև ալժամ, դեռ յե՛վս զինվորներին մարմնական պատիժներ են տալիս: Խարեքայութեամբ և բռնութեամբ բուրժուազիան ստիպում է անդիտակից զինվորներին ծառայել իրենց համար ոտար շահերին:

Յե՛վ այնուամենայնիվ, չնայած բուրժուազիայի ձեռք տաճ բոլոր միջոցառումներին, հեղափոխական շարժումը ներմուծվում է և՛ կապիտալիստական բանակների մեջ: Քանի զնում ավելի ու ավելի հաճախակի յեն դառնում քաղաքական հուզումները դորամասերում, մանավանդ պահեստայինների շրջանում, վորոնք կանչվում են կրկնողական բանակներում զինվորների յեյուլթիւնում կապիտալիստական բանակներում զինվորների յեյուլթիւններ՝ Կարմիր բանակի հետ համերաշխութեան լողուններով: Բազմաթիւ գեղաբեր կա՞, յերբ զինվորները պաշտպանում են բանվորների հեղափոխական պահանջները: Այդպես, Յրանախյում շատ դեպքեր են յեղել, յերբ պահեստայինները և կազմային գորամասերը յելույթներ են ունեցել, պահեստայինները յեղբայ-

բացել են այստամբած բանվորների հետ: 1930 թ. Ֆրանսիայում այդպիսի 150 ցույցեր են յեղել զինվորների և ծովայինների կողմից: Այդ ցույցերը կատարվել են հետևյալ լոգոնիշներով՝

- «Կորչի՛ պատերազմը»
- «Կեցցե՛ Կարմիր բանակը»
- «Կեցցե՛ն խորհուրդները»
- «Կեցցե՛ խորհրդային միությունը»:

Ֆրանսիայում 1930 թ. մանյովրների ժամանակ զինվորները յեղբայրացան բանվորների հետ: Նման հեղափոխական յելույթներ ունեցան զինվորները և՛ Լեհաստանում, և՛ մյուս յերկրներում:

1931 թ. սեպտեմբերին, խոշոր հուլիսներ ծագեցին անգլիական տորմիդի մատրոսների միջև, վորոնց ոտձիկն անգլիական կառավարությունը պահանջեցել էր: Մատրոսները հրաժարվեցին մասնակցել ծովային մանյովրներին, միտինգներ, բողոքի ցույցեր կազմակերպեցին, յերգում եյին հեղափոխական յերգեր: Հուլիսները տարածվեցին անգլիական բանակի մի շարք սրբամասերում, վորոնք նավատորմի որինակով մի շարք պահանջներ ներկայացրին կառավարությանը: 1931 թ. ծովայինների խոշոր ապստամբություն ծագեց և՛ Չիլի նավատորմում (Հարավային Ամերիկայի պետություն):

Բուրժուազիան առանձնակի խստությամբ է իր հաշիվները մաքրում զինվոր-հեղափոխականների հետ և խստագույն միջոցներն է գործադրում պահպանելու բանակը հեղափոխական «վարակից»:

Սոցիալ-Ֆաշիստներն այստեղ նույնպես ոգնության են հատում բուրժուազիային: Ոգավելով զեռ մնացած մի փոքր հավատախց, վոր նրանք ունեն հետամնաց աշխատավորների շերտերի ու մանր բուրժուազիայի շրջանում, նրանք ոգնում են բուրժուազիային՝ քաղաքականապես մշակելու զինվորներին մասսաներին: Սոցիալ-Ֆաշիստները ձգտում են ապացուցելու զինվորներին, վոր նրանք ծառայում են ազգի և պետության շահերին, վոր դատակարգային պայքարը կործանում է բերում իրենց պետության համար, վոր իրենց կառավարությունը խաղաղության է ձգտում, մինչդեռ հարևան յերկրները և մասնավանդ Սորհրդային յերկրը պատրաստվում են զինված հարձակում գործելու իրենց վրա: Այսպես են խճճում զինվորների զխտակցությունը, ստերով ու հերյուրանքներով սոցիալ-Ֆաշիստները, վորոնք իրենց սոցիալիստներ և աշխատավորների շահերի պաշտպան են հորջորջում:

Համենայն դեպս, կապիտալիստներն զգալով իրենց մշտական բանակների անհուսալիսթյունը, ստեղծում են ռազմա-Ֆաշիստական կազմակերպություններ, վորոնց վրա նրանք կարողանային ամբողջովին հենվել ՍՍՀՄ դեմ պայքարում և իր յերկրում ու իր

բանակում հեղափոխական շարժման դեմ պայքարի գործում: Ռազմա-Ֆաշիստական կազմակերպությունների թիվն ավելի յե, քան կանոնավոր բանակների թիվը:

Ֆաշիստական կազմակերպությունների անդամները հավաքաբարվում են գլխավորապես բուրժուազիայի, կալվածատերերի, կուլակների, ինտելիգենտների, շինովնիկների զավակներից: Մակայն նրանց մեջ կան նույնպես խարված ու հրապուրված բանվորներ և աշխատավոր գյուղացիներ: Ֆաշիստական այդ կազմակերպությունները գլխավորում են մեծ մասամբ մշտական բանակի սպաները: Ֆաշիստական կազմակերպությունները կանոնավոր կերպով սովորում են ռազմական գործը:

Բուրժուազիան ուժեղ թափով զինում ու քաղաքականապես դատախարակում է Ֆաշիստական կազմակերպություններին: Ֆաշիստներին առելություն են ներշնչում զեպի ՍՍՀՄ, զեպի կոմունիստները, զեպի բանվորների ու աշխատավոր գյուղացիների հեղափոխական շարժումները: Ֆաշիստական կազմակերպությունները լավ զինված են և արդեն այժմ յայտարարում են իրենց կապիտալիստական յերկրներում՝ գործադուլների ու հեղափոխական շարժումների դեմ պայքարի համար:

Բուրժուազիան իր բանակներն այնպես է սրատրաստում ու դատախարակում, վորպեսզի նրանք միշտ հենարան լինեն կապիտալիստական կարգերի համար, վորպեսզի նրանք կարողանան կովի դուրս գալ իր յերկրի աշխատավորների դեմ, վորպեսզի նրանք հենարան դառնան բուրժուազիայի համար՝ համաշխարհային սրբութատրիստի հայրենիք — ՍՍՀՄ դեմ պայքարում:

Ո՞րն շահերին են ծառայում կապիտալիստական բանակները:

Ի՞նչ միջոցառումներով է բուրժուազիան ապահովում իր գերիշխանությունը բանակում:

ԻՆՉՈՎ Ե ԱՄՈՒՐ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ: ՆՐԱ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՐՅՈՒՄԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՑ:

Կարմիր բանակը կատարյալ հակադրությունն է Հին, ցարական բանակի և այժմյան բուրժուական բանակների:

Մեր բանակը—սրբութատրական պետության գործիքն է: Կարմիր բանակում նպատակների ու խնդիրների մեջ չկա և չի կարող լինել վոչ մի հակասություն Կարմիր բանակի ու նրա անձնական կազմի միջև: Կարմիր բանակը կյանքի յե կոչված պաշտպանելու սրբութատրիստի դիկտատուրայի յերկրը, Սորհրդային իշխանության քաղաքականությունը, աշխատավոր մասսաների շահերը, համաշխարհային սոցիալիստական հեղափոխու-

Քյան շահերը: Յեւ այդ պատճառով մենք կարիք չենք զգում մարտիկից թաղցնելու մեր Կարմիր բանակի դասակարգային բնույթը, նրա նպատակներն ու խնդիրները:

Կարմիր բանակի Դաշտային կանոնադրքի առաջին կետում սոված է՝

«Կարմիր բանակը հանդիսանում է պրոլետարական պետութեան, — աշխարհում աշխատավորների առաջին և միակ հայրենիքի, — զենքը:

Նա կոչված է սպահովելու և պաշտպանելու սոցիալիզմի ու պրոլետարական հեղափոխութեան թշնամիների բոլոր հանցափորձերից ԽՍՀՄ անկախութեանը և պահպանելու բանվորների ու գյուղացիների սոցիալիստական շինարարութեանը, խաղաղ աշխատանքն ու ազատութեանը:

Պաշտպանելով ԽՍՀՄ, նա իր գոյութեան փաստովն իսկ աջակցում է ամբողջ աշխարհի ճնշված աշխատավորների՝ իրենց ազատագրման համար մղած պայքարին:

Կարմիր բանակն ուժեղ է՝ իր դասակարգային գիտակցութեամբ, անձնուրաց նվիրվածութեամբ կոմունիզմի գործին, բանվորա-գյուղացիական լայն մասսաների հետ ունեցած իր կապով և աջակցութեամբ, կարգապահութեամբ և Խորհրդային Միութեան թշնամիներին զինված ուժերի խորտակելի ջախջախման համար իր զենքը լիովին ոգտագործելու կարողութեամբ»:

Կարմիր բանակում չկա և չեն կարող լինել դասակարգային հակասութեամբ շարժային ու պետերի կազմերի միջև, վորովհետև պետերի կազմը, ինչպես և ամբողջ բանակը, շոկվում են բանվորներից և աշխատավորներից, վորովհետև Կարմիր բանակի շարքային ու պետերի կազմերի շահերն ու խնդիրները մեկ են:

Ժամանակակից բուրժուական բանակներում սպայական կազմի ճնշող մեծամասնութունը — բուրժուազիայից կազմած տեղերից, մանր բուրժուազիայից է: Միայն կրտսեր հրամատարական պաշտոններում կարելի չէ տեսնել և՛ նախկին աշխատավորների, վորոնք մեծ մասամբ կարել են իրենց կապերն իրենց դասակարգի հետ և անցել են բուրժուազիայի մոտ ծառայութեան, դարձել են բուրժուազիայի ազենաները:

Այնինչ Կարմիր բանակում հրամատարները մեջ մենք ունենք յուրաքանչյուր 100 հրամատարին 32 բանվոր, իսկ մնացած աշխատավորները — կոլտնտեսականներ, գյուղացիներ, ծառայողներ են: Այսպիսով Կարմիր բանակը զայրոցներ մտնելու համար նոր պատրաստվող հրամատարների մեջ բանվորների տոկոսն է՛լ ավելի չէ:

Կարմիր բանակի հենց դասակարգային բնույթից, նրա նպատակներից ու խնդիրներից էլ բխում է մեր բանակի կարգապահութեան ելույթները և մեր կարգապահութեան տարբերությունը բուրժուական բանակի կարգապահութեանից: Բուրժուական բա-

նակում կան անհատ դասակարգային հակասութեաններ սպայութեան և շարքային մասսայի միջև, բուրժուական պետութեան ու աշխատավորների դասակարգային շահերի միջև, բուրժուական բանակի խնդիրների և զինվորների մասսայի շահերի միջև: Այդ պատճառով բուրժուական բանակներում կարգապահութեան հիմքն և հանդիսանում զինվորների — բանվորների ու գյուղացիների դասակարգային ստորադասումը բուրժուազիայից ու կազմատերերից նշանակված սպաներին: Այդ պատճառով կարգապահութեանը բուրժուական բանակներում բոնի դասակարգանորեն-հարկադրական բնույթ ունի: Բուրժուազիան ուժով ու խաբրայութեամբ զինվորներին հարկադրում է հնազանդվել իր շահերի ոգտին, իր կողմից սահմանած որենքներին ու կարգերին բանակում:

Իսկ մեր բանակում չկա դասակարգային տարբերություն կարմիր բանակայինների ու հրամատարների միջև: Բոլոր Բանակում որենքներն ու կարգերը սահմանված են Խորհրդային իշխանութեան կողմից աշխատավոր մասսաների շահերի ոգտին: Կարմիր բանակում Կարմիր բանակում հիմնված է մարտիկների հեղափոխական գիտակցութեան վրա, շարքային ու պետերի կազմերի դասակարգային շահերի բնույթներից իրենց հանդիսանում է պետութեան և Կարմիր բանակի նշանակութեան ու խնդիրների բոլոր զինվորականների կողմից գիտակցորեն հասկանալու վրա: Դրանումն է մեր կարգապահութեան ուժը:

Հրամատարի ու կարմիր բանակայինի փոխհարաբերությունները կառուցված են փոխադարձ հարգանքի վրա, Կարմիր բանակի ամբողջման ընդհանուր դասակարգային շահագրգռվածութեան սկզբունքների վրա, բանակում որենքով սահմանված կանոնների ու կարգապահության և յուրաքանչյուր զինվորականի կողմից իր պարտականությունները գիտակցորեն կատարելու վրա:

Կապիտալիստական պետութեան բանակը պաշտպանում է բուրժուազիայի շահերը, իսկ այդ բանակի մարտիկները — բանվորներ ու գյուղացիներ են: Վորքան քաղաքականապես դարգացած լինի մարտիկը, այնքան ավելի պարզ կգիտակցի, վոր ինքը պայքարում է վոչ թե իր շահերի համար, այլ կապիտալիստների շահերի համար: Վաղաքականապես զրազեա զինվորը վտանգավոր է բուրժուազիայի համար: Այդ պատճառով բուրժուական բանակներում ձգտում են զինվորներին կոմիտե վորպես մի հլու գործիք իմպերիալիզմի համար, նրան հավատարիմ ծառայող դարձնել բուրժուազիայի համար:

Մեր Կարմիր բանակում մարտիկների դաստիարակությունը կառուցված է միանգամայն այլ կերպ: Կարմիր բանակը պաշտպանում է յուրաքանչյուր հրամատարի ու կարմիր բանակայինի շահերը: Վորքան զրազեա ու գիտակից լինի Կարմիր բանակի մար-

տիկը, այնքան ավելի կամրացնի մեր զորամասերի մարտական հզորութիւնը, այնքան ավելի հաստատուն կանգնած կլինի պրոլետարական դիկտատուրայի և մեր յերկրում սոցիալիստական շինարարութեան պաշտպանութեան համար:

Դրա համար, յուրաքանչյուր զորական մասում հսկայական ուշադրութիւն են դարձնում մարտիկի քաղաքական զարգացման վրա:

Յուրաքանչյուր կարմիր բանակային ակտիվ կերպով պետք է մասնակցի բանակում քաղաքական աշխատանքին, այդպիսով ե՛լ ավելի ամրապնդելով նրա մարտունակութիւնը:

Վո՞րն է կարմիր բանակի հիմնական տարբերութիւնը բուրժուական բանակից:

Ինչի՞ վրա յե հիմնված կարգապահութիւնը կարմիր բանակում:

Ի՞նչպիսի խնդիրներ է հետապնդում քաղաքական աշխատանքը կարմիր բանակում:

ԿՍՐՄԻՐ ԲԱՆԱԿՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՍՍԱՆԵՐԸ

Բուրժուադիան ամեն կերպ աշխատում է զինվորներին անջատել աշխատավոր մասսաներից, բանակը հակադրել աշխատավորներին:

Կարմիր բանակում ընդհակառակը — մենք աշխատում ենք վորքան հնարավոր է ավելի սերտ ու ամուր կապ հաստատել մեր բանակի ու աշխատավորների միջև: Կարմիր բանակը պաշտպանում է աշխատավոր մասսաների շահերը, և դրա համար Կարմիր բանակի շահերը մոտ են և հասկանալի աշխատավորներին, և աշխատավոր մասսաներն ամեն կերպ ոգնում են Կարմիր բանակի ամրացմանը:

1918 թ. խորհուրդների 3-րդ համաժողովական համադրման րում, յերբ նոր եր կազմակերպվել Կարմիր բանակը, լենինն իր յերլոյթիւմ պատմեց հետեյալը.—

«Յես թույլ եմ տալիս ինձ պատմելու ինձ հետ պատահած մի դեպքի մասին: Այդ պատահեց Ֆինլանդական յերկաթուղազմի վաղուցում, վորտեղ յես լսեցի մի քանի ֆինների և մի պտռով կնոջ վաղուցում, վորտեղ յես լսեցի մի քանի ֆիններին և մի պտռով կնոջ յոտակցութիւնը: Յես չէի կարող չմասնակցել խոսակցութեանը, վորովհետեւ չգիտեի ֆիննական յեզուն, բայց ինձ դիմեց մի ֆինն և ասաց.

— Գիտե՞ք, ինչպիսի գերորիգլնալ բան ասաց այդ պտռով կինը: Նա ասաց. «Այժմ հարկավոր չէ վախենալ հրացանով մարդուց: Յերբոր յես անտառումն եյի, ինձ պատահեց հրացանով մի մարդ, փոխանակ ձեռքիցս խլելու, նա դեռ ավելացրեց ի՞մ ցախի վրա»:

Յերբ յես այդ լսեցի, — շարունակեց իլլինը, — յես ինձուինձ տասցի.— Թող հարյուրավոր թերթեր, ինչպես ել նրանք կոչվելիս լինեն — սոցիալիստական, համարյա—սոցիալիստական և վեն մեզ «դիկտատորներ», «բուխարտներ» և այլ նման խոսքեր: Թեք գիտե՞ք, վոր ժողովրդական մասսաների մեջ այժմ բարձրանում է մի ուրիշ ձայն. նրանք իրենց մասին են խոսում՝ այժմ հարկավոր չէ վախենալ հրացանով մարդուց, վորովհետեւ նա պաշտպանում է աշխատավորներին և անոգսը կլինի շահագործողների տիրապետութիւնը ձեռնալու մեջ»:

Կարմիր բանակի ուժը նրա և աշխատավոր մասսաների ամուր տանքակտելի դաշինքի մեջ է:

Բազմաթիւ ֆարքրիկներ, գործարաններ, հիմնարկութիւններ, խորհուրդներ, պրոֆիտութիւններ չեֆեր են հանդիսանում Կարմիր բանակի զորամասերի համար: Բանվորների կողմից կարմիր բանակային զորամասերի վրա չեֆութիւն վերցնելու հիմնական նպատակն է՝ ե՛լ ավելի ամրացնել պրոլետարիատի ազդեցութիւնը Կարմիր բանակի վրա, ավելի ամուր կապել նրան ղանվոր դասակարգի հետ:

Զորամասերի ու նրանց չեֆերի միջև հաստատվում է ամուր ընկերական կապ: Կարմիր բանակայինները հաճախում են բանվորական ակումբները, գործարանները, ծանոթանում են սոցիալիստական արգելադրութեան հետ, ժամանակակից գործարանի աշխատանքի պայմանների հետ, բանվոր դասակարգի կյանքի ու կենցաղի հետ: Բանվորները գնում են Կարմիր բանակայինների ակումբները, ուսումնասիրում են կարմիր բանակայինների կյանքն ու կենցաղը, կազմակերպում են ընդհանուր հանդեսներ, երգուրեսիաներ, սոնակատարութիւններ, սպորտային խաղեր և այլն: Բանվորները հաճախում են տակտիկական պարսպաժուլներին, դաշտ դուրս դալուն, մանյովրներին, ծանոթանում են Կարմիր բանակի ուսուցման ու դաստիարակութեան հետ:

Չեռնարկութեան բանվորները ոգնում են իրենց յենթաչեֆ զորամասերին տեխնիկան յուրացնելու գործում, բանակի կարիքները համար դուրստարութեան գործում և այլն:

Կարմիր բանակային զորամասերն իրենց կողմից ոգնութիւն են ցույց տալիս աշխատավորներին քաղաքական կամպանիաներ անցկացնելու ժամանակ, կազմակերպում են շարաթորյակներ բերքը հաւաքելու համար և այլն:

Վոչ մի ուրիշ բանակում չկա և չի կարող լինել այդպիսի ամուր կապ բանակի ու աշխատավոր բնակչութեան միջև:

Ի՞նչպիսի են կարմիր բանակի և աշխատավորների միջև փոխադարձութիւնները:

Ի՞նչ նշանակութիւն ունի փարբիկների, գործարանների բանվորների շեփութիւնը գործարանների վրա:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ—ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՅՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՂ

Կարմիր բանակի հիմնական խնդիրը — մարտական ուսուցումն է: Սակայն միեւնոյն ժամանակ կարմիր բանակը հանդիսանում է առաջնակարգ քաղաքական դպրոց:

Կարմիր բանակը մեր յերկրի մեծ սոցիալիստական շինարարութիւնից հետո չի կանգնած: Կարմիր բանակում գինւորականներն ուղտովում են ի՞նչ: Միութեան աշխատավորները բոլոր քաղաքական իրաւիւններն ունեն: Կարմիր բանակն իր պատգամավորների միջոցով մասնակցում է խորհուրդների և հասարակական կազմակերպութեաններին աշխատանքներին: Կարմիր բանակը մասնակցում է պրոլետարական պետութեան ամբողջ հասարակական-քաղաքական կյանքին և շինարարութեանը:

Կարմիր բանակն ամեն տարի ամենախուլ, հեռավոր գյուղերն ու գործարաններն է վերադարձնում հարյուր հազարավոր կատարելապես դրագետ մարտիկներին սոցիալիստական շինարարութեան ճակատը: Դորոնք նվիրված են կուսակցութեանն ու խորհրդային իշխանութեանը:

Կարմիր բանակային-արձակուրդավորները հսկայական զեր են կատարում գործարաններում, մանապէս գյուղում: Նրանք կուսակցութեանն ու խորհրդային իշխանութեան քաղաքականութեան լավագույն ազխատորներն ու հաղորդիչներն են: Նրանք ամբողջում են գյուղի աշխատավորների հավատը դեպի բանվոր դասակարգի և կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեանը: Նրանք աջակցում են տարածելու ազգային զիտելիքները գյուղական բնակչութեան մեջ: Նրանք ոչնչում են կազմակերպելու ռազմական անկյուններ, խրճիթ-ընթերցարաններում և գործարար մասնակցութեան են ունենում Պաշտ-Ալիքաբադի բջիջները և մյուս հասարակական կազմակերպութեաններին աշխատանքներում: Նրանք հող են տանում գյուղացիութեան լուսավորութեան, դպրոցներ, խրճիթ-ընթերցարաններ բանալու մասին, թերթերի բաժանորդագրութեան են կազմակերպում և այլն: Նրանք պայքարում են զեղծարարութեաններին, բյուրոկրատիզմի և այլ բացերի դեմ, վորոնք դեռևս գոյութեան ունեն գյուղում տեղական մարմիններում և հիմնարկութեաններում, կոտորածայիւրում, հասարակական կազմակերպութեաններում: Նրանք ակտիվ պայքար են տանում կուսակային տարրերի դեմ, վորոնք փորձում են քայքայել սոցիալիստական շինարարութեանը գյուղում: Յեզ գյուղացիութեան լայն մասսաները, տեսնելով կարմիր բանակային-ար-

ճակարակավորների ակտիվ գործունեութեանը, հաճախ նրանց ներկայացուցիչներ և անդամներ են ընտրում գյուղխորհուրդներում, ռազմական կոմիտեաներում, ընտրում են կուսակցութեանների ղեկավարներ և այլն: Շարքային կարմիր բանակայինների մեջ կան ընտրված խորհուրդները համագումարներում, կենտրոնական անդամներ և միութեանական հանրապետութեանների կենտրոնականների անդամներ:

Արձակուրդավորները հատուկ զեր են կատարում գյուղատնտեսութեան սոցիալիստական վերակառուցման մեջ, գյուղում կուլիկտի տնտեսութեանները կազմակերպելու ու նրանց վարկ տալու մեջ: Այսպէս կարմիր բանակայինները հանդիսանում են առաջավոր, ակտիվ խմբակը կոլտնտեսական շինարարութեան կազմակերպչական ու պրոպագանդի գործում:

Տասնյակ հազարավոր կարմիր բանակայիններ ամեն տարի կուսակցութեաններ են դառնում բանակի շարքերում: Կարմիր բանակային-արձակուրդավորներից մեր յերկրի դանազան անկյուններում կազմակերպված են տասնավոր սքանչելի կոլտնտեսութեաններ ու կոմունիստներ:

Ամենից շատ խոշոր կարմիր բանակային կոմունիստներ գոյութեանն ունեն Հեռավոր արեւելքում: Այն կոլտնտեսութեաններին, վորոնք կազմակերպված են կարմիր բանակային-արձակուրդավորներից, նույնպէս և այն կոլտնտեսութեաններին, վորոնք իրենց մեջ են ընդունում կարմիր բանակային-արձակուրդավորներին, վերապահվում են նրանց մի շարք շատ կարեւոր և դնահատելի արտոնութեաններ ու առավելութեաններ:

Այսպէս՝ կարմիր բանակը հսկայական գործ է կատարում գյուղը նոր, սոցիալիստական սկզբունքներով վերակառուցելու մեջ: Յուրաքանչյուր կարմիր բանակային հենարան պետք է լինի կուսակցութեան շինարարութեան գործում. նա պետք է հասկանա, սութեաններին շինարարութեան գործում. նա պետք է հասկանա, թե վորոնք են կուլիկտի տնտեսութեան առավելութեանները, պետք է ինքը մանի կոլտնտեսութեան մեջ և ակտիվ ազխատորը լինի կոլտնտեսութեանների ու նրանց կազմակերպչական-տնտեսական ամբողջական համար:

Ի՞նչ փաստեր կան այն մասին, վոր կարմիր բանակը համադիսանում է առաջնակարգ քաղաքական դպրոց:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ-ԳՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԲՆՈՒՅԹԸ

Կարմիր բանակն իր շարքերում միախմբում է Պեր խորհրդային Միութեան մեջ բնակվող բոլոր ազգութիւնների աշխատավորներին: Կարմիր բանակը պաշտպանում է աշխատավորների շահերը անկախ նրանից, թե ինչ ազգութեան են նրանք պատկանում:

Կարմիր բանակը — ԽՍՀՄ բոլոր ազգութիւնները աշխատա-
վորները զինված հենարանն է, վորոնք ի մի յեն համախմբվելը
միատեղ պայքարելու պրոլետարիատի գրկատուութեան, սոցիա-
լիզմի համար:

Կարմիր բանակը — ամբողջ աշխարհի աշխատավորների շահերի
պաշտպանն է — համաշխարհային պրոլետ. հեղափոխ. առա-
ջավոր կայուն ջոկատն է, ԽՍՀՄ-ի՝ համաշխարհային պրոլետա-
րիատի հայրենիքի — հավատարիմ պահապանն է: Կարմիր բա-
նակը ամբողջութեամբ պրոլետարական պետութեան մարտական հզո-
րութեանն ու պաշտպանունակութեանը, այդպիսով իսկ ուժե-
ղութեանն է նաև միջազգային պրոլետարիատին, նրա՝ իր ազատա-
դաստիարակ համար մղած պայքարում, սոցիալիզմի համար պայ-
քարում: Կարմիր բանակը ազատագրում է բերում բոլոր յերկիր-
ները աշխատավորներին և ճնշված ժողովուրդներին կապիտա-
լիստների, կալվածատերերի, կուլակների տիրապետութեանից:
Կապիտալիստական յերկրների պրոլետարիատը սիրում է
Կարմիր բանակին, նայում է նրա վրա վորպես իր դասակարգային
չահերի պաշտպանի վրա, վորպես համաշխարհային հեղափոխու-
թեան առաջամարտիկի վրա: Բանվոր դասակարգը մեծ սիրով ու
հուսով է հետևում Կարմիր բանակի մարտական հզորութեանն ած-
մանը:

Ամենքին հայտնի յէ, թէ ինչպիսի հսկայական ողնութեան
ցույց տվին մեզ բանվորները կապիտալիստական յերկրներում
քաղաքացիական պատերազմի ժամանակ: Այժմ նույնպես բանվոր
դասակարգը հեղափոխական շարժմանն ու ԽՍՀՄ պաշտպանու-
թեան պայքարին յի ահա յի մասնակցութեամբ ողնում է՝ քայքա-
յելու բուրժուազիայի հակախորհրդային պատերազմական պլան-
ները:

Գաղութների հարստահարված ժողովուրդները, վորոնք հա-
մառ. պայքար են մղում իրենց ազատագրութեան համար ոտարեր-
կըրյա և իր բուրժուազիայի ճնշումից, նույնպես հաստատ զիտեն,
վոր հանձինս Խորհրդային Միութեան և Կարմիր բանակի նրանք
ունեն իրենց հավատարիմ պաշտպանն ու բարեկամը: Միջազգա-
յին հեղափոխական պրոլետարիատի բարձրագույն կազմակերպու-
թեանը իրենց վրա յեն վերցրել Կարմիր բանակի զորամասերի
թիւնները և կենսագործում են այն: Գրանդ էլ՝ ալելի յի ամ-
բողջութեամբ Կարմիր բանակի ու միջազգային պրոլետարիատի
կապը:

Կարմիր բանակն իր հերթին ակնդետ ուշադրութեամբ հետե-
վում է համաշխարհային պրոլետարիատի հեղափոխական — դա-
սակարգային պայքարին: Կարմիր բանակը զիտե, վոր յեթէ իմպե-
րիալիստները նոր հարձակում գործեն մեր վրա, նա կունենա իր
հուսալի դաշնակիցը, թշնամու թիկունքում: Կարմիր բանակը

հաստատ համոզված է, վոր «մեր ինդիւրն է՝ ամբարնդել դաշինքը
համաշխարհային պրոլետարիատի հետ, և հիշել վոր մեր թշնամու՝
համաշխարհային կապիտալիզմի հետ կռիւ բռնաբանութեամբ, մեր բա-
նակը — դա վոր միայն մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները
կլինեն, այլև ամբողջ աշխարհի պրոլետարիատը, վորը վեր կկենա
— հա-
խորհրդային հանրապետութեան պաշտպանութեան համար — հա-
մաշխարհային պրոլետարիատի հայրենիքի պաշտպանութեան հա-
մար»: (Կազանովիչ):

Այսպես ուրեմն, մեր Կարմիր բանակը միջազգային պրոլետա-
րիատի բանակն է: Նա բոլոր յերկրները աշխատավորները դասա-
կարգային շահերին պաշտպան է կանգնած: Կարմիր բանակը իր
էյուլթամբ ինտերնացիոնալ-դասակարգային բանակ է:

Յեւ հենց այդ վորով է դաստիարակվում մեր Կարմիր բանա-
կը: Կարմիր բանակի ինտերնացիոնալ-դասակարգային դաստիա-
րակութեանը հանգիստում է Կարմիր բանակի ամբողջ ուսուց-
ման ու դաստիարակութեան կարելիորագույն մոմենտները մեկը:

Կարմիր բանակում, ինչպես և մեր Խորհրդային Միութեան
մեջ մի ազգութեան կողմից մյուսի վրա ճնշում չի կարող լինել
կամ մի ազգութեանը մյուսի նկատմամբ նախապատվութեան չի
տրվում: Բոլոր ազգութեանները մեր Միութեան մեջ և Կարմիր
բանակում հավասար իրավունքներ ունեն:

ԽՍՀՄ բոլոր ազգութեանների աշխատավորները միահամուռ
ջանքերով սոցիալիզմ են կառուցում, նրանք բոլորը որդանապես
չահագրգռված են խորհրդային պետութեան հենարանի — Կարմիր
բանակի ամբողջման մեջ:

ԲԳԿ Բանակում վճռական պայքար է տարվում ամեն տեսակ
ազգայնական տարածախութեանների դեմ, տեղական նացիոնա-
լիզմի և մեծապետական շովինիզմի դեմ, վորն այժմ դիտավոր վը-
տանդ է հանդիսանում, ամեն տեսակի թշնամական հարաբերու-
թեանները դեմ տարբեր ազգութեանները աշխատավորների միջև,
վորովհետև այդ տարածախութեանը թուլացնում է Կարմիր բա-
նակի մարտունակութեանը:

Կարմիր բանակայինը դաստիարակվում է բոլոր ազգութեան-
ների աշխատավորները դասակարգային համբաշխութեան վորով
և դեպի բոլոր ազգերի բուրժուազիան, կալվածատերերը, կուլա-
կութեանը դասակարգային ատելութեան տաճիւղ վորով: Այլ է
բուրժուական յերկիրներում և այդ յերկրների բանակներում:

Այնտեղ մի շարք ազգութեաններ ողավում են արտոնութեան-
ներով, մյուս ազգութեանները — վորքամասնութեանը — հա-
րստահարվում են, հալածվում են: Բուրժուազիան միշտ աշխա-
տում է ազգային յերկպառակութեան միջոցով հրահրել ազգային
ատելութեանը աշխատավորների միջև, նրանց ուշադրութեանը

յետ դրավել դասակարգային պայքարից, հնարավորութիւն չտալ նրանց համախմբելու իրենց ընդհանուր թշնամու — բուրժուազիայի — դեմ: Առանձնապէս բուրժուազիան ղրկում է այդ միջոցներին այն ժամանակ, յերբ անում է հեղափոխական շարժումը, սրվում է դասակարգային պայքարը:

Ազգային ճնշումն ու ազգային ասելութեան հրահրումը առանձնապէս ուժեղ է Լեհաստանում, Ռումինիայում: Ազգային փոքրամասնութիւնները աշխատավորները — գերմանացիները, ուսանները, ուկրաինացիները, հրեաները, բելոուսները — ազգային հալածանքներն այդ յերկրներում հասել են անասելի չափերի: Արեւմտյան Բելոուսիայում, Արեւմտյան Ուկրաինայում, Գալիցիայում լեհական պաները լծի տակ հեծողները հալածանքները վայրենի խրախճանքի բնույթ են ստացել: Վոչնչացվում են ամբողջ դշուղեր, լինում են մասսայական գնդակահարութիւններ և բացառիկ ծաղր ու ծանակի յի յինթարկվում աշխատավոր բնակչութիւնը:

Ազգային հալածանքներ էլին դործադրվում նաև թե՛ ցարական Ռուսաստանում և թե՛ ցարական բանակում: Բաղմաթիւ ազգութիւններ ցարական Ռուսաստանում և նրա բանակում ծաղրի էլին յինթարկվում, հալածվում էլին և սահմանափակում էլին նրանց իրավունքները:

Կուլակները, վնասարարները, նեպոճանները, մեր դասակարգային թշնամիները աշխատում են ոգտադրծել ազգային յերկրառակութեան այդ փորձված զենքը, վորպեսզի պառակտում առաջ բերեն աշխատավորները մեջ, թուրացեն նորհրդային իշխանութիւնը:

Նրանք առանձնապէս ուժեղ են տանում հակահրեայական պրոպագանդը, մյուս ազգութիւններին դրդում են հրեաների դեմ: Դրա համար ամեն տեսակ հնարովի լուրեր, բամբասանքներ են տարածում: Մասնավորապէս սովորաբար հակահեղափոխականները և նրանց ձայնակիցները լուրեր են տարածում, թե հրեաները բարձր պաշտոններ են վարում յերկրում և բանակում, վոր կարմիր բանակայինների մեջ չկան հրեաներ և այլն: Այնինքն և ամեն կերպ պետք է մերկայցնել դասակարգային թշնամիների այդ ստոր կեղծիքն ու սուտը:

Առաջ, հին բանակում հրեա հրամատարներ չկային: Հսկումբերյան հեղափոխութիւնը ազատազրեց աշխատավոր հրեաներին, քնչպէս և ուկրաինացի, բելոուս, հայ աշխատավորներին ազգային ճնշումից: Յե՛վ այժմ Կարմիր բանակում, հրամատարները մեջ կան նույնպէս հրեաներ, վորնք աշխատավորները են: Որհնրդական իշխանութեան համար կարևոր չէ թե ինչ ազգութեան են պատկանում հրամատարները: Կարևոր է նրանց դասակարգային ղրկականութիւնը և պրոլետարական հեղափոխութեան դործին նվիր-

վածութիւնը: Հարկավոր է, վոր հրամատարը, լինի նա ուսուցիչ-բանակային բելոուս կամ հրեա, լինի ամենից առաջ կայուն մարտիկ Որհնրդային իշխանութեան, կոմունիզմի համար:

Չարամիտ սուտ լուրեր են, յերբ ասում են, թե կարմիր բանակայինների մեջ չկան հրեաներ: Հրեա կարմիր բանակայինների մեջ չկան հրեաներ: Հրեա կարմիր բանակում 2,5% էլ ու կարմիր սորմիղայինների թիւը Կարմիր բանակում 2,5% էլ աւելի է, այնինքն ավելի է, քան մեր յերկրում ապրող հրեա աշխատավոր բնակչութեան տոկոսն է, վորը կազմում է ՈՍՀՄ ամբողջ բնակչութեան մոտ 2%-ը:

Հակահրեայականութիւնը հակայական վնաս է պատճառում աշխատավոր մասսաների դասակարգային միաձուլութեանը, թուրացնում է Կարմիր բանակի մարտունակութիւնը: Յե՛վ այդ պատճառով անհրաժեշտ է ամենամոտոգր վայրերը մղել հակահրեայականութեան դեմ:

Որհնրդային իշխանութեան ազգային քաղաքականութիւնն իր արտացոլումն է գտնում Կարմիր բանակի շինարարութեան մեջ: Կարմիր բանակում կան ազգային դորամասեր Ուկրաինայում, Բելոուսիայում, Վրաստանում և մյուսներում: Ուսուցումն ու դաստիարակութիւնը այդ դորամասերում տարվում են մայրենի լեզուով:

Ի՞նչու մենք Կարմիր բանակը անվանում ենք համաշխարհային հեղափոխութեան բանակ: Ի՞նչու մենք արտահայտվում Կարմիր բանակի ինտերնացիոնալ-դասակարգային բնույթը:

ՀԱՄ. Կ(Բ)Կ—ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՉՆ ՈՒ ԿԱՌՈՒՅՈՂՆ Ե

Սենն մի բանակ հանդիսանում է այն պետական իրավակարգի պատկերը, վորին նա պաշտպանում է: Այսպէս էր սովորեցնում մեզ սոցիալիզմի մեծ ուսուցիչ Ենգելսը: Կարմիր բանակը իր կազմակերպութեամբ և իր ղեկավարութեամբ կառուցված է նույն հիմունքներով, ինչ հիմունքներով կառուցված է մեր պրոլետարական պետութիւնը:

Մեր յերկիրը—պրոլետարիատի ղեկատուութեան պետութեան է: Պրոլետարիատի ղեկատուութեան սահմանումը մեր յերկրում, նրա պաշտպանութիւնն ու ամբացումը, մեր հաջող սոցիալիստական շինարարութիւնը հնարավոր դարձաւ միայն նրա համար, կան շինարարութիւնը ղեկավարում էր և ղեկավարում է բանվոր վորովհետև այդ բոլոր ղեկավար—կոմունիստական կուսակցութեան կողմէն: Վորպէս պրոլետարական հեղափոխութեան հաստատուն կառուցումը, վորպէս պրոլետարական հեղափոխութեան թշնամի պահպանում, կոմիսիոնար աշխատավորները դասակարգային թշնամիների դեմ բաղմամբ պայքարում, միաձուլ իր շարքերի յերկրի կարգապահութեամբ և միասնութեամբ: Առանց կոմունիստական

կուսակցութեան ղեկավարութեան աշխատավորները չեն ին կարող հաղթութիւն տանել իրենց դասակարգային թշնամու դեմ:

Ինչպես պատերազմում զորամասը կարիք ե զգում փորձված, համարձակ և վճռական հրամատարի, այնպես ել դասակարգները պայքարում, աշխատավորներն իրենց պղատաղբութեան համար պայքարում չեն կարող հաղթել, յեթե նրանք չեն ունենա գլուխ կանգնած փորձված, կայուն ու վճռական առաջնորդ—կոմունիստական կուսակցութիւնը: Մեր ուսուցիչները—ընկ. բնկ. Լեոնինն ու Ստալինը բազմաթիւ անգամ են ասուցուցել այդ:

«Պայքարում՝ առանց յերկաթե ու կոբիլված կուսակցութեան, — ասում եր ընկ. Լեոնինը, — առանց ավյալ դասակարգում ամբողջ ազնիւ մասից վատահուլթիւն վայելող կուսակցութեան, վորն ընդունակ ե հետեւել մասսաների տրամադրութեանը և ազդել նրա վրա, հնարավոր չե հաջողութեամբ այդպիսի պայքար մղել:

«Առանց կուսակցութեան, — ասում եր ընկ. Ստալինը, — վորպես հիմնական ղեկավար ուժի, անկնար ե վարե ե յերկարատւ և հաստատուն պրոլետարիատի դիկտատուրա»:

Կուսակցութեան այդ ղեկավարութիւնը նրանումն ե, վոր կուսակցութիւնը, վորպես պրոլետարիատի առաջավոր, ամենից ավելի գիտակից և միաձուլ ջոկատ, կազմակերպում ե բանվոր դասակարգը, նրա շարժն ե համախմբում աշխատավոր մասսաներին, դաստիարակում ու կոբում ե նրանց դասակարգային թշնամիները ղեմ պայքարում և նրանց դործնելութիւնն ուղղում ե սոցիալիզմի շինարարութեանը:

«Վաչ մի կարեւոր փառքական կամ կարգակերպչական հարց մեզանում չի վնդվում մեր խորհրդային կազմակերպութիւնները կողմից, առանց կուսակցութեան ղեկավար ցուցումների» (Ստալին):

Խորհուրդները, պրոֆմիութիւնները, հասարակական—քաղաքական, կոոպերատիվ կազմակերպութիւնները միջոցով կուսակցութիւնն անխղիչ կապված ե աշխատավոր մասսաների հետ: Իրենք կուսակցականները միշտ աստիճան շարքերում, իրենց անձնական որինակով, անձնադրութեամբ, կարգապահութեամբ ու հաստատուածութեամբ մասսաներին դրսովում են սոցիալիզմի շինարարութեան մեջ և այն թշնամիներից պաշտպանելու գործին:

Կարմիր բանակում նույնպես, ինչպես յերկրում, ղեկավար դերը Կարմիր բանակի շինարարութեան բոլոր ճյուղերում և կարմիր բանակային մասսաներին դաստիարակելու մեջ պատկանում ե կոմունիստական կուսակցութեանը:

Մեր կուսակցութիւնն ու նրա լեոնինյան կենտրոնական կոմիտեն հանդիսանում են Կարմիր բանակի կազմակերպիչներն ու կառուցողը:

Կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ կազմա-

կերպից Կարմիր բանակը, վորը հաղթանակ տարավ աշխատավորների թշնամիները դեմ:

Կոմունիստական կուսակցութեան ղեկավարութեամբ ընթացում Կարմիր բանակի ամբողջ շինարարութիւնը, կազմակերպումը և նրա պետերի կազմի պատրաստութիւնը:

Կուսակցութեան ղեկավարութեամբ մեր բանակը, այժմ ևս, հաղեցված տեխնիկայով, ամբողջում ե իր մարտունակութիւնը:

Մեր բանակն ամբողջելու կարելիորապէս միջոցառումներն անց են կացվում մեր կուսակցութեան ղեկավար ցուցումներով: Կուսակցութեան ղեկավարութեամբ մեր բանակն անց ու դարձավ մի հզոր ու անեղ ուժ մեր թշնամիները համար:

Կուսակցութիւնն իր ղեկավարութիւնը Կարմիր բանակում իրականացնում ե հեղ. ուղի. խորհուրդները, քաղաքական մարմինները, կոմիսարները ու հրամատարները միջոցով, զորամասերը կուսակցական կազմակերպութիւնները միջոցով: Քաղաքական մարմինները, մտնելով Կարմիր բանակի կազմակերպութեան ընդհանուր սխեմայի մեջ, միաժամանակ հանդիսանում են և՛ կոմունիստական կուսակցութեան մարմիններ: Կարմիր բանակի Քաղաքական վարչութիւնը (ԲԳԿԻ ԳՎ), լինելով ԽՍՀՄ Հեղ. Ռազմ. խորհուրդի կենտրոնական վարչութիւնը, միաժամանակ հանդիսանում ե ՀամԿԿ(Բ) ԿԿ Ռազմական բաժինը:

Քաղաքայինները վարում են ամբողջ կուսակցական և քաղաքական—լուսավորութեան աշխատանքը Կարմիր բանակում: Քաղաքայինները ղեկավարում են կուսակցական ու կոմիսարիատական կազմակերպութիւններին, վորոնք գոյութիւն ունեն Կարմիր բանակի զորամասերում ու հիմնարկութիւններում, հսկում են նրանց կազմին և ուղղութիւն են տալիս նրանց գործունեութեանը: Քաղաքայինները բանակում հսկայական աշխատանք են տանում կուսակցական ու կոմիսարիատական կազմակերպութիւնները, հրամատարները ու կոմիսարները միջոցով:

Այդ ամբողջ աշխատանքը, ինչպես յուրաքանչյուր կուսակցական կազմակերպութեան աշխատանքը բանակում, ուղղված ե այն բանին, վոր վորքան հնարավոր ե ավելի լավ ամբողջել մեր բանակի մարտունակութիւնը, վորպես պրոլետարական դիկտատուրայի գործիք: Այս հիմնական կարելիորապէս խնդիրը կուսակցական կազմակերպութիւնները լուծում են՝ բանակի անձնական կազմի մարտական պատրաստութեան և դաստիարակութեան աշխատանքում պետկազմին ցույց տրվող ակտիվ աշակցութեան միջոցով, Կարմիր բանակային մասսայի հետ սերտորեն շփման ու լայն քաղաքական—դաստիարակչական աշխատանքի միջոցով, կուսակցականները ցույց տված անձնական որինակի միջոցով, ուսուցման, կարգապահութեան և կենցաղում ցուցադրվող որինակելի գիտակից վարքաբարքի միջոցով:

Մեր կուսակցութեանը բանակում, ինչպես և յերկրում հակա-
յական վստահութիւնն և վախերում կարմիր բանակային մասսաների
ու պետկազմի կողմից :

Կուսակցութեան ղեկավար դերը բանակում, նրա ազդեցու-
թիւնը կարմիր բանակի ամբողջ շինարարութեան ու կյանքի վրա
բանի գնում ուժեղանում ու աճում է : Այդ պարզ ցույց և տախ-
կուսակցութեան ու կոմյերիտակութեան մշտական աճումը բանա-
կում : Բանակի ամբողջ կազմի համարյա կեսն այժմ կուսակցական-
ներ ու կոմյերիտակներ են : Ընդվորում կուսակցական ու կոմ-
յերիտակյան կազմակերպութիւններում բանվորների տոկոսն ամ-
բողջ ժամանակ բարձրանում է :

Այսպես, վերջին յերեք տարվա ընթացքում, կուսակցական
կազմակերպութիւններում բանվորների տոկոսը բարձրացել է
41,7-ից մինչև 63,7-ի, կոմյերիտակյան կազմակերպութիւններում
— 37,5-ից մինչև 49,3 : Բանվորների թվի այդպիսի աճումով էլ
ավելի յե ապահովում կոմունիստական ու կոմյերիտակյան կազ-
մակերպութիւնների տոկոսնութիւնն ու ամբողջութեանը բանակում
և նրանց ազդեցութեանը կարմիր բանակային մասսայի վրա :

Ամբողջ մեր կարմիր բանակն ամբողջովը միաձուլված է կո-
մունիստական կուսակցութեան և նրա լենինյան կի շուրջը ընկ-
Ստալինի գլխավորութեամբ : Կոմունիստները կարմիր բանակում և
նրանց ղեկավարութեամբ ամբողջ կարմիր բանակային մասսան
մշտապես ու հաստատուն անց են կացնում մեր կուսակցութեան
գլխավոր դիժը, պայքարում են այդ դժի համար, պաշտպան են
կանդնած նրան՝ բոլոր տեսակի ոպորտունիստական խեղճների
դեմ պայքարում : Յե՛վ միայն շնորհիվ դրան է, վոր հաջողութեամբ
ընթանում է կարմիր բանակի շինարարութեանը, փորպես պրոլե-
տարական դիկտատուրայի հուսալի ու ամուր գործիքի :

Մեր բանակը—պրոլետարական դիկտատուրայի ամուր գործի-
քն է, կառուցվող սոցիալիզմի հուժկու սրտվարը :

Մեր կուսակցութեան և նրա կի ղեկավարութեամբ պլխավորու-
թեամբ ընկ. Ստալինի, իր փորձված մարտական առաջնորդու-
շամկ(ր)կի Քարգրուրովի սնդամ ընկ. վարաչիտովի առաջնորդու-
թեամբ, կարմիր բանակը անընդհատ կատարելագործվելով, այժմ
իրենից ներկայացնում է մի հուժկու մարտական ուժ, ահարկու
ուժ՝ պրոլետարական դիկտատուրայի թշնամիների համար : Իզուր
չէ, վոր միջազգային իմպերիալիստները, ՍՍՀՄ դեմ ինտերվենցիա
հրահրողները, այնպես լեռանդապին սրահանջում են ինն վնասարար-
ներից ուժեղ աշխատանք անել կարմիր բանակը քայքայելու հա-
մար : Սակայն վնասարարներն ասում են ինն դատարանում, վոր բո-
լոր նրանց փորձերը՝ ներթափանձել կարմիր բանակ, ստեղծել
այնտեղ իրենց բջիջները, ծավալել այնտեղ հակահեղափոխական
աշխատանքը, — հաջողուից : Բանակի ամբողջ անձնակազմը կազմի
աշխատանքը, — հաջողուից : Բանակի ամբողջ անձնակազմը կազմի

դասակարգային դրոնութեանը, մարտիկների ու պետկազմի դաս-
կարգային միաձուլութեանը հնարավորութեանը չափին վնասարար-
ներին աշխատանք անել կարմիր բանակում :

«Մեր Միութեան ղեկավար զինված ուժերը հանդիսանում են կազ-
մակերպչական մարտական ու քաղաքական տեսակետից մի
հուսալի զինված հեծարան՝ պրոլետարիատի դիկտատուրայի
համար» :

Այսպես ղեկուցեց կուսակցութեան XVI համագումարին կար-
միր բանակի առաջնորդ՝ ընկ. վարաչիտովը :

«Մեր այս հայտարարութեանը, ասաց նա, — անհիմն հայ-
տարարութեան չէ : Վերջին ժամանակներս կարմիր բանակը
հնարավորութեան ունեցալ գործով ապացուցելու իր մարտա-
կան պատրաստութեանն ու քաղաքական կայունութեանը :
Հեռավոր Արեւելքում կարմիր բանակի ջոկատներից մեկը
փայլուն կերպով քննութեան բռնեց մարտական ընդունակու-
թեանից և քաղաքական կայունութեանից : կարմիր բանակի
Հեռավոր Արեւելքյան մարտական ստուգումը ամբողջութեամբ
և կատարելապես հաստատեց նրանց քաղաքական դատախ-
բանութեան ճշտութեանը :

Մեր բանակը յենթարկվեց և մի ուրիշ ստուգման քաղա-
քական կայունութեանից : Կուսակց, կուլիկտիվացման ու կու-
րակութեան փորպես դասակարգի վերացման առնչութեամբ,
փորձում էր բաղխել կարմիր դրանոցների դեմերը՝ չի՞ գտնի
արդյոք այնտեղ ողնութեան ու համակրութեան : կարմիր բա-
նակը միահամուռ ու միաբան նույն վճռական ու հատու հա-
կահարվածը ավելց կուրակութեան այդ փորձերին, ինչպես և
Սորհրդային Միութեան բոլոր աշխատավորները :

Ի՞նչ դեր է կատարում կուսակցութեանը կարմիր բանա-
կի կազմակերպման ու շինարարութեան մեջ :

Ինչպե՞ս է իրականացնում կուսակցութեանը իր ղեկավա-
րութեանը կարմիր բանակում :

Ի՞նչ փաստեր կան կարմիր բանակի միաձուլութեան մա-
սին—պրոլետարական դիկտատուրայի բանակի մասին :

ԸՆԿ. ՍՏԱԼԻՆԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԱՌԱՋԻՆԱԿԱՏՎՈՒՄԵՐԻ
ՄԱՍԻՆ :

«Մեր կարմիր բանակի առաջին և հիմնական առանձնա-
հատկութեանն այն է, վոր նա աղատադրված բանվորների ու
գյուղացիների բանակ է, նա Հոկտեմբերյան հեղափոխութեան
բանակն է, պրոլետարիատի դիկտատուրայի բանակն է : Մինչև
այժմ յեղած բոլոր բանակները, ինչպիսի կազմ մը նրանք ու-
նենային, հանդիսանում են և հանդիսանում են կապիտալի

տիրապետութեան հաստատման բանակներ: Նրանք չեղել են և
մնում են վորպես կապիտալի տիրապետութեան բանակներ:
Բոլոր յերկրներէ բուրժուապիտան ստում է, յերբ ասում է թէ
բանակը քաղաքականապես չեղող է: Այդ սխալ է: Բուրժուա-
կան պետութեան բանակը զրկված է քաղաքական իրա-
վունքներից, նա հետացված է քաղաքական ասպարիզից—այդ
ճիշտ է: Սակայն այդ բոլորովին չի նշանակում, վոր նա չեզոք
է քաղաքականապես: Ընդհակառակը, միշտ և ամեն տեղ, բո-
լոր կապիտալիստական յերկրներում բանակը ներգրավվել
և ներգրավվում է քաղաքական պայքարի մեջ, ծառայելով
վորպես գործիք բանվորներին ճնշելու համար: Մեր կարմիր
բանակն այդ բանակներից տարբերվում է այն առանձնահատ-
կութեամբ, վոր նա հանդիսանում է բանվորների և գյուղա-
ցիների իշխանութեան հաստատման գործիք, պրոլետարիատի
ու կալվածատերերի լծից բանվորներին ու գյուղացիներին
ազատագրելու գործիք: Մեր բանակն աշխատավորների ազա-
տագրութեան բանակն է: Հին ժամանակ, նույնիսկ հենց այժմ
կապիտալիստական յերկրներում ժողովուրդը վախենում էր և
չարունակում է վախենալ բանակից, ժողովրդի ու բանակի
միջև գոյութեան ունի մի անջրպետ, վորն անջատում է բա-
նակին ժողովրդից: Մեզանում ընդհակառակը,—ժողովուրդն
ու բանակը կազմում են մի ամբողջութեան, մի ընտանիք:
Վոչ մի տեղ աշխարհում այնպիսի հոգատար վերաբերմունք
չկա ժողովրդի կողմից դեպի բանակը, ինչպես մեզանում:
Մեզանում սիրում են բանակին, հարգում են նրան, հոգ են
առնում նրա մասին: Ինչո՞ւ: Վորովհետեւ աշխարհում առաջինը
բանվորներն ու գյուղացիները ստեղծեցին իրենց սեփական
բանակը, վորը վոչ թէ սարսուղներին և ծառայում, այլ նախկին
ստորուկներին, ներկայումս ազատագրված բանվորներին ու
գյուղացիներին:

Կարմիր բանակի յերկրորդ առանձնահատկութեան այն
է, վոր նա, մեր բանակը, ժողովուրդների յեղբայրութեան բա-
նակ է, ճնշված ժողովուրդների ազատագրութեան բանակ է,
մեր յերկրի ազատութեան ու անկախութեան պաշտպանութեան
բանակ է: Հին ժամանակ սովորաբար բանակը դաստիարակ-
վում էր շտաբների վոգով, փակ կյանքով, ոտար ժողովուրդ-
ներին տիրելու անհրաժեշտութեան վոգով: Յե՛վ հենց դրանով
էլ բացատրվում է այն, վոր հին տիպի բանակները, կապիտա-
լիստական բանակները, դրա հետ միասին և գաղութային բա-
նակներ էյին (այսինքն՝ գաղութները նվաճելու և հարստահա-
րելու բանակներ): Մեր բանակն արմատապես տարբերվում
է գաղութային բանակներից: Ամբողջ նրա ելութեանը, ամբողջ
նրա կառուցվածքը հիմնվում է մեր յերկրի ժողովուրդների

բանակի ամբողջ կապերը ամբացնելու վրա, ճնշված ժողո-
վուրդներին ազատագրելու դադապարի վրա, Սորհրդային
Միութեան կազմի մեջ մանող սոցիալիստական հանրապետու-
թեանների ազատութեան ու անկախութեան պաշտպանութեան
դադապարի վրա: Դրանումն է մեր կարմիր բանակի ուժի ու
հզորութեան յերկրորդ և հիմնական աղբյուրը: Դրանումն
է այն յերաշխիքը, վոր մեր բանակը կրիտիկական մոմենտին
կգտնի խոչորագույն աջակցութեան բոլոր ազգութեանների
միլիոնավոր մասսաների կողմից, վորոնք բնակված են մեր
բայնածավալ յերկրում:

Վերջապես, կարմիր բանակի յերրորդ առանձնահատկու-
թեանն ինտերնացիոնալիզմի վոգու, ինտերնացիոնալիզմի
դպագմունքի մեջ է, վոր ներծծված է մեր ամբողջ կարմիր
բանակը: Կապիտալիստական յերկրներում սովորաբար բա-
նակները դաստիարակվում են դեպի մյուս պետութեաններն
առելութեան վոգով, դեպի մյուս յերկրների բանվորներն ու
գյուղացիներն առելութեան վոգով: Ինչի՞ համար է այդ ար-
վում: Նրա համար, վորպեսզի բանակը դարձնեն մի հյու հնա-
մական նախիր՝ պետութեանների միջև, յերկրների միջև ուղ-
տալիստական բանակների թուլութեան աղբյուրը: Մեր բանա-
կը կառուցված է միանգամայն այլ հիմունքներով: Մեր կար-
միր բանակի ուժը նրանումն է, վոր նա դաստիարակվում
է, իր գոյութեան հենց առաջին օրից, ինտերնացիոնալիզմի
վոգով, մյուս ժողովուրդներին հարգելու վոգով, բոլոր յեր-
կրների բանվորներին հարգելու վոգով, յերկրների միջև խա-
նայութեան պահպանելու ու հաստատելու վոգով: Յե՛վ հենց
այդ է պատճառը, վոր մեր բանակը դաստիարակվում է ին-
տերնացիոնալիզմի վոգով, բոլոր յերկրների բանվորների շա-
տակարանութեան վոգով, հատկապես դրա համար, նա,
մեր բանակը հանդիսանում է վորպես համաշխարհային հե-
ղափոխութեան բանակ, վորպես բոլոր յերկրների բանվորների
բանակ:



40.409